

# ՄԱՐԵՏՆԻՑ

Ճանաչել գիմաստությունն եւ գիտաւ,  
իմանալ գրանս հանճարոյ...

Գիրք «59»





# ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԸ

Հնուց ի վեր հայ հասարակության մեջ կանխորոշված է եղել կնոջ տեղն ու դիրքը, իրավունքներն ու պարտականությունները՝ տարիքային որոշակի տարբերություններով հանդերձ: Դրանք, անշուշտ, շատ չափով պայմանավորված են եղել դարաշրջանների սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական, էթնոմշակութային իրողություններով, ազգային ավանդույթներով, կրոնական միջավայրով, հարևան ժողովուրդների հետ ունեցած մշակութային շփումներով:

Հայությանը բնորոշ է եղել ապրել գերդաստանական ընտանիքներով ու ավանդույթներով՝ ուղղահայաց, նահապետի միանձնյա առաջնորդությամբ, բազմանդամ, 4-5 սերնդային կազմով, 40-50, երբեմն էլ անգամ 100-ի հասնող անդամներով, վիպասան Բաֆֆու հավաստմամբ՝ 20 մանկան օրորոցներով: Այդ նշանակում է, որ մեկ հարկի տակ ապրել են մինչև 20 անհատական ընտանիքներ, որտեղ հստակ կանխորոշված է եղել աշխատանքի բաժանումը ըստ սեռի և տարիքի. դրսի՝ տնտեսական և արտադրական աշխատանքները իրականացնելու էր տղամարդը, ներսինը՝ կենցաղի և հոգևոր ուղորտներում կինը: Ուստի և՛ յուրաքանչյուր անհատ՝ կին թե տղամարդ, պատանի թե մանկահասակ երեխա, սովորույթի ուժով պետք է ունենար կանոնակարգված իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ: Կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին լիարժեք ծառայելու գիտակցությամբ: Հատկապես կարևորվել է գերդաստանի նահապետի ու նրա կնոջ դերը, որոնք, առաջնորդվելով սովորութային չափանիշներով, կարողանում էին հաստատուն պահել հասարակության հիմքը հանդիսացող ընտանիքի ամրությունը:

Հայ կնոջը մշտապես բնորոշ է եղել ընտանիքին, աշխատանքին, ազգային, ընտանեկան ավանդույթներին, հայրենիքին անսահման նվիրվելու, հնազանդ, հավատարիմ լինելու պատրաստակամությունը: Կյանքը ընտանեկան խիստ պայմանների մեջ էր մշակել որոշակի սովորութային օրենքներ, կանոնակարգումներ, որոնց հետևում էին սրբությամբ: Կինը մանկուց դաստիարակվում էր ընտանիքի շահերի պաշտպանության և հավատարմության, ինչպես նաև իր նոր ընտանիքի մշակութային միջավայրին հարմարվելու ոգով: «Աղջիկը հոր տանը կծկած կծիկ է, կեսրանց տանը հոր տան կծիկը կքանդեն, նորից կկծկեն, պիտի դիմանաս, քանի անգամ էլ կծկեն: Աղջկա հերն ու մերը կեսրանց տան դռան հետևը դրած են, ինչքան էլ վատաբանեն ու հայիոյեն, դու դիմացի: Աղջկա հերն ու մերը հիմի կիսուրն ու կեսարն են»:

Ահա թե ինչու, անցյալում աղջկան ամուսնացրել են այն տարիքում, երբ նա դեռևս չի ունեցել որոշակի կայուն համոզմունքներ և սկզբունքներ: 9-14 տարեկան հասակում ընկնելով նոր ընտանիք՝ հեշտությամբ հնազանդվում էր այնտեղ տիրող կենցաղավարությանը: Վաղ տարիքի ամուսնությունները լիովին համապատասխանել են նահապետական գերդաստանի պահանջներին՝ ոչ միայն աշխատող ձեռքերի պակասը լրացնելու, այլև հյու, հնազանդ հարս ունենալու համար:

Ամուսնու նվիրվելը, հնազանդ ու հավատարիմ լինելը մշտապես հայ կնոջ սրբազան պարտականություններից էին: Նա հանդուրժող էր ու համբերատար, ողջախոհ, կրում էր ամուսնու տոհմանունը, հետևում էր օջախի կրակը մշտապես վառ պահելուն, հեռու էր անաստված քայլերից՝ ամուսնական դավաճանությունից, արհեստական վիժումներից, ապահովում էր ընտանիքի սերնդային վերարտադրությունը՝ առանց որևէ սահմանափակման: Ջանադիր խնամք ու հոգատարություն էր տաճում գերդաստանի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Կնոջ ամուսնական դավաճանությունը սովորույթի ուժով ոչ միայն ընտանիքի, այլև համայնքի կողմից ենթակա էր պարսավանքի ու մարմնական դաժան պատժի: Հայ կինը ընտանիքի կայունության, հարատևության, սերնդաձի, օջախի հարստության, բարեկեցության երաշխավորն էր ու պահպանող, նրա դիմագիծը, հեղինակությունն ու արժանապատվությունը: Ամուսնալուծությունը իրականացվել է միայն բացառիկ դեպքերում. կնոջ բարոյական անթույլատրելի վարքի, երկուստեք մաշկային և վնեճական ախտերի, դիվահարության, 7 տարի համատեղ ապրելուց հետո կնոջ չբերության դեպքերում: Երիտասարդ կինը կարող էր ամուսնանալ ամուսնու մահից առնվազն սգո մեկ տարին լրանալուց հետո միայն:

Կնոջ մահը մեծ դժբախտություն էր ընտանիքի համար. այն նույնացվում էր տունուտեղը քայքայվելու, երեխաների որբանալու գաղափարի հետ: Նման դեպքում տան տղամարդը ասում էր. «Մեկը չունիմ օջախս վառի, տանս կրակը անի, ճրագը վառի»: «Ընտանիք-օջախ-կին» բառերը հոմանիշ են ու նույնիմաստ: Ընտանիք, օջախ բառերը հաճախ գործածվել են նաև տանտիրուհի, տանտիկին իմաստներով:

Հայերը կնոջ նկատմամբ վերաբերմունքը համարել են «պատվի հարց»: Ժողովրդական բանահյուսության մեջ առ այսօր շրջանառվում են կնոջ դերի ու պահվածքի վերաբերյալ թևավոր խոսքեր. «Կնիկդ որ լավ ըլնի, մի էրթա հարսանիք, տանդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թե կնիկդ փիս ըլնի, մի էրթա մեռլատուն, տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն», «Լավ կնիկը տուն ու տեղ է, վատ կնիկը՝ ցավ», «Մեռնի քո կնիկ, ավրի քո տնիկ», «Տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի», «Կնիկը թանկ է իր գլխավորով, տղեն՝ իր խեր ու մերով», «Կնիկը տղամարդու հոգին ա», «Կնիկ մարդ որ կա՝ մարդու կյանքն ա», «Հա անկնիկ տուն, հա անալյուր ջաղաց» և այլն:

Հին և միջնադարյան Հայաստանում հայ կինն ունեցել է ազատություն և բարձր հեղինակություն՝ հնագույն քաղաքակրթության ազգային առանձնահատկությունների, քրիստոնեական ավանդույթների արմատավորման շնորհիվ: Ուշ միջնադարում նրա ազատության նահանջն ու անկումը բացատրվում է հայոց պետականության վախճանով և այլակրոն ու այլաբարո տերերի՝ նվաճողների պարտադրված ազդեցությամբ: Սկսած արաբական տիրապետությունից մինչև XX դարը՝ հայ կնոջ ազատության աստիճանական սահմանափակումներն ու նրա նկատմամբ կիրառվող



գելանքները հենց նման ազդեցության հետևանք են եղել: Աստիկ և վաղ միջնադարյան աղբյուրները չունեն վկայություններ հայ կնոջ անազատ կյանքի ու արգելքների վերաբերյալ: Միջնադարյան մանրանկարներում չենք հանդիպում բերանակապ, չխոսկանություն մարմնավորող կերպարների: Ժողովրդի աշխարհայեցողությունը տարբերություն չի դրել օրինակ «Սասնա Շռեր»-ի տղամարդ և կին հերոսների միջև. վերջիններս օժտված են նույն ծիրքերով, ինչ որ տղամարդիկ, ֆիզիկապես ուժեղ են, անվախ, մենամարտի հրավեր են նետում տղամարդկանց, գոտեմարտում նրանց հետ. գրագետ են, իմաստուն. միանգամայն ազատ են իրենց վարվեցողության մեջ. բացարձակ անձնիշխան են՝ իրենք են ընտրում ամուսիններ, չեն խորշում նույնիսկ ժամանակավոր կենակցությունից, բայց և նվիրված են իրենց սիրուն առհավետ: Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» ևս կինը դրված է տղամարդուն հավասար վիճակի մեջ, իսկ եթե տնտեսական վիճակով կինը նկատված է հավասար տղամարդուն, ապա ուրեմն կյանքի այլ բնագավառներում ևս նրա իրավունքները ինքնաստիճանի պիտի հավասար լինեն տղամարդու իրավունքներին: Ինչպես միջնադարյան հայ դատաստանագրքերում, այնպես էլ նրանց հողվածների կիրառման վերաբերյալ արխիվային և այլ օժանդակ աղբյուրներում իրավական ոչ մի սահմանափակում չի եղել կանանց վերաբերյալ, ընդհակառակը՝ ինչպես դատարանի առաջ, այնպես էլ հասարակական գործունեության բոլոր բնագավառներում կինը հանդես է եկել որպես լիիրավ քաղաքացի: Բացառություն են կազմել այն բնագավառները (զինվորական, վարչաքաղաքական և այլն), որոնցում գործելը միջնադարի անապահով դրության, կանանց ֆիզիկական առանձնահատկության և ընտանիքի ու երեխաների հոգսի պատճառով վեր էր կնոջ ուժից:

XIX դարի ազգագրական կյուրեր գրառողների, ինչպես նաև «օտարների» կարծիքները հայ կնոջ «ստրկական» վիճակի մասին միակողմանի, պատմականությունից զուրկ են: Իրականն այն է, որ երիտասարդ կինը խիստ պայմաններում է գտնվել և փնկված կյանք վարել վերջին դարերում: Դրա պատճառը պատմական այն դժբախտ իրականությունն է եղել, որ դարեր շարունակ հայ ժողովրդի վրա բռնացել են բարբարոս, միայն յաթաղանի օրենք ձանաչող օտարները՝ ստեղծելով ալան-թալանի, առևանգումների և բռնաբարությունների մղձավանջային միջավայր: Այդ պայմաններում ապրող հայությունը իր նահապետական կենցաղի բերումով ծայրահեղորեն բժախնդիր էր կանանց բարոյական մաքրության պահպանման հարցում, ուստի հարկադրված էր երիտասարդ կանանց փակել տան չորս պատերի մեջ՝ սահմանափակելով շփումները դրսի հետ, ոչ միայն ծածկելով, այլև երբեմն դիտավորյալ այլանդակելով նրա գեղեցկությունը՝ բիրտ ու վավաշոտ տիրողների չար աչքից և հարեմի դժոխքից զերծ պահելու համար:

Ըստ մահմեդական դավանանքի՝ «երկու բան պետք է ծածուկ պահել օտարի աչքից՝ մեկը փողը, մյուսը՝ կնոջը»: Նրանց՝ կնոջ, քրոջ կամ հասուն աղջկա մասին հարցնելը անվայելույ էր համարվում: Նրանց

իրավունքում՝ կինը ամուսնու սեփականությունն էր. իրավունք չունեի միայնակ դուրս գալ տնից կամ տուն թողնել օտարին՝ միայնակ լինելիս:

Ի տարբերություն Արևելքի մահմեդական կանանց իրավունքների ու պարտականությունների՝ օտար ծանապարհորդները հիացմունքով են խոսել հայ կնոջ աշխատասիրության, պատվասիրության, օտար այցելուներին ամուսնու ներկայությամբ բարեհաճ վերաբերմունքի ու հյուրասիրության, ընտանիքի ամրության հարցում կնոջ դերի մասին՝ իբրև մայր և ամուսին: Ըստ օտարների, ինչպես օրինակ՝ Խ. Աբովյանի հայրական տուն այցելած Հաքստիաուզենի՝ «Հայկական գերդաստանի ներսում կանանց վիճակը միանգամայն տարբեր է շրջապատի այլ «Ասիայի» ժողովուրդների հետ համեմատած. հայուհիներն ունեն հավասարություն իրավանց և արժանավորություն...»: Հայ կնոջ մասին ռուս հայտնի ծանապարհորդ ու բժշկապետ Ա. Ելիսեևը, որը 1860-ական թվականների կեսերին այցելել էր Արևմտյան Հայաստան, գրել է. «Ուրիշ արարած է հայուհին, նա միշտ ոտի վրա է՝ անխոնջ աշխատավոր, միշտ զբաղված առտնին գործերով: Կարելի է համարձակ ասել, որ աշխատանքը նրա ոսկի ձեռքերից ցած չի ընկնում: ...Հայուհու աշխատասիրությունը մինչև անգամ առկա է դարձել Արևելքում. թրքական հայտնի առակ կա, որ ասում է. «Հայուհին նման է անընդհատ պտտվող անիվի», մինչդեռ թրքուհին, պարսիկ կինը կամ արաբուհին իր ամուսնու հարեմից դուրս, օրինակի համար, այրիացած ժամանակ, սովորաբար ոչ մի բանի ձեռք զարկել չի կարողանում, հայուհին նվիրված է իր ընտանիքին, զավակներին, աշխատասիրությունը նրա բնածին հատկությունն է: ...Արևելքի բոլոր ազգերի մեջ մենք չենք ծանաչում մի ուրիշ ազգ, որի մեջ այնքան լավ կազմակերպված լինելը ընտանիք և այսքան ամուր դիրք ունենար կինը՝ իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի է ասել, որ հայը ամենաքնքուշ ամուսինն է Արևելքում»: Ըստ նրա գնահատումների՝ «հայուհին հայ ազգության հենարանն է, այն շաղախը, որ միացնում և ամրացնում է հայ գերդաստանը, արևելքի արժանավորագույն կինը, ամուսնական անկողնու մաքրությունն ու ընտանեկան օջախի սրբությունը, անխոնջ աշխատասիրությունը նրա առաքինություններից էին»:

Շուփանեստ Թումանյանը հայ դարավոր ավանդույթի համաձայն կնոջն ու տղամարդուն մի մարմին, մի բարոյական ամբողջություն է տեսնում, մինչդեռ մահմեդականը՝ իբրև կյանքի վայելք է դիտում, փակում է հարեմում և պահապաններ դնում նրանց հսկելու համար. «Նրանց կրոնը չորս կին է թույլատրում և հարձ՝ որքան ուզեք: Նա ընտանիք չունի, բարոյական հարստություն, ամուր հիմք ու ապավեն չունի»:

Այրական կողմնորոշում ունեցող հայ հասարակության մեջ կնոջ կյանքի առաջնահերթ խնդիրն է համարվել ընտանիքը և ոչ թե աշխատանքն ու կարիերան: Ավանդական հասարակությունում կանանց պարտականությունների շրջանակը տևային տնտեսությունն էր և գյուղմթերքների մշակումը: Կինը տան ներսի պատն էր, տունը նրա կենսագործունեության տարածքը, իսկ գլխավոր խնդիրը՝ ընտանիքի, օջախի



արպահպանությունը, երեխաների խնամքն ու դաստիարակությունը:

Շայ կինը, լինելով համեստ ու հնազանդ, չափավոր, հույժ կանոնակարգված, անձնվիրության, բեղմնավորության և արգասավորության մարմնացում, վտանգի պահին դրսևորել է նաև հերոսի կերպարին բնորոշ գծեր: Նրա ըմբոստ ոգին վտանգի, օրհասական պահին միշտ էլ հավատարիմ է մնացել հայրենի տան, ընտանիքի սրբության գաղափարին՝ նախընտրելով մահն անպատիվ կյանքից, և դա դրսևորվել է մեր ժողովրդի երկարամյա ազատագրական պայքարի ամենատարբեր դրվագներում: Ազգային ազատագրական պայքարին առավել գործուն մասնակցություն են ցուցաբերել հատկապես արևմտահայ կանայք: Դրան նպաստել է ամենօրյա անմիջական ճնշումների ու նվաստացումների ենթարկվելու և դրանց ակնատեսը լինելու պարագան, ինչպես նաև վճռական ազատամարտում իրենց ամուսիններին սատարելու նրանց բուռն ձգտումը: Նրանցից մեկը հայդուկապետ Աղբյուր Սերոբի կինը՝ Սոսն Մայրիկն է (1868-1953)՝ Ախլաթ գավառի Թեղուտ գյուղից: 13 տարեկանում ամուսնացել էր Սերոբի հետ և ամուսնու աստանդական կյանքի ընթացքում եղել նրա հավատարիմ գործակիցը: Ամուսնու զոհվելուց հետո էլ նա նրա զենքով շարունակել է անհավասար մարտը: Այդպիսի հերոս մայրիկներից են եղել Վանի Այգեստան թաղում մեծ հարգանք վայելած Դրախտի Մայրիկը (Նանիկ Ջինոյանը), ով 1904-1908թթ. իր աղջկա՝ օրիորդ Երանուհու հետ բանտարկվել էր՝ ազատագրական շարժման ակտիվորեն մասնակցելու համար: Ազգային ազատագրական շարժման գործին Թավրիզում նույն ձևով օժանդակել է Նունե Մայրիկը, ով չարսավով ծածկված զենք ու զինամթերք էր հասցնում հեղափոխականներին: Ազատաբաղձության հիանալի օրինակներ են ցուցաբերել սասունցի հայուհիներ Ալիքանցի Հավուն (1894թ. Սասունի գոյամարտում), Սեմալցի Մարգոն, Ծենիկցի Գրիգորի կին Շաքեն, հայդուկ Մաքոյի կին Մարիամը, խմբապետ Ուլայենի ստեղծած կանանց զորաջոկատը: Զավակների տեր կինը մի քանի ամիս շարունակ մարտնչել է Տարոնի ինքնապաշտպանական հերոսամարտերում և զոհվել թուրքական յաթաղանից:

Ցրոնցի Շուշուն և նրա հետ կռվող կանայք, Ուրֆայի 1915թ. գոյամարտում եղիսաբեթ Յոթնեղբայրյանը, Խանում Քեթենջյանը, Մարիամ Զիլինգարյանը, Շապին-Գարահիսարի և Սվեդիայի գոյամարտերում կանայք թաղեթաղ զենք-զինամթերք են փոխադրել, հող, քար, եռացրած ջուր շարտել թշնամու վրա, քաջալերել մարտիկներին, Մուսա լեռան հերոսամարտերում էլ անօրինակ սխրանքներ են գործել Շուշան Գապայանը, Մաևուշակ Յագուպյանը և բազմաթիվ այլ հերոսուհիներ:

Խորհրդային տարիներին կանայք զանգվածաբար ներգրավվեցին հասարակական աշխատանքային ոլորտի երկրորդական սոցիալական կարգավիճակի մասնագիտական կառույցներում: Մեր օրերում որոշ կանանց առաջխաղացումը՝ տնից դուրս աշխատանքը, դրամ վաստակելը, տնտեսական անկախությունը, նրանց տալիս են բարձր հասարակական, տնտեսական կարգավիճակ, սոցիալական նոր դեր: Այդուհան-

դերձ, մեր իրականության մեջ կանանց զգալի մասը դեռևս իր տեղը համարում է ընտանիքը, խոհանոցը, երեխա ունենալն ու դաստիարակելը, ամուսնուն հոգալն ու խնամելը: Ծատ կանայք միտումնավոր հրաժարվում են հասարակական, տնտեսական ակտիվությունից՝ վախենալով չհամապատասխանել կանացիության իդեալին և նվազ չափով կանացի երևալ: Շայ հասարակությունում շարունակում է նախընտրել մնալ կանանց համեմատաբար համեստ դիրքը: Այս է իսկական հայուհու կայուն կարծրատիպն ու ավանդական մարդկային տեսակը:

Աշխատաշուկայում այսօր գործազուրկների զգալի մասը կանայք են: Գործազուրկ կանանց 60%-ը պատկանում է 30-60 տարիքային խմբին՝ պահանջարկի պակասի պատճառով: Աշխատանքի նկատմամբ մեզանում հատուկ պաշտամունք կա: Բացի ընտանիքին ֆինանսական օժանդակության հանգամանքից, աշխատանքը ինքնադրսևորման, ինքնաիրացման, սեփական արժանիքներն ու հնարավորությունները նորովի բացահայտելու լավագույն միջոցն է: Մեր օրերում աշխատանքի սոցիալական արժեքը անչափ կարևորվում է որպես անձի կայացման պարտադիր պայման: Զաշխատող մարդը՝ կին թե տղամարդ, իրեն չկայացած է զգում: Աշխատող մարդուն որակում են՝ «ընտանիք է պահում», իսկ աշխատող կանանց՝ «երեխա է պահում»: Աշխատող կանանցից շատերի աշխատանքը մեր օրերում վերածվել է ընտանիքը նյութապես ապահովելու միջոցի, որպես գոյատևման ռազմավարություն: Գործազուրկի կարգավիճակից խուսափելու միտմամբ շատերը գերադասում են ցածր վճարվող «կանացի» (գրասենյակային աշխատանքներ, համակարգչային օպերատոր), սպասարկման ոլորտում աշխատանք կատարել:

Անուրանալի է հայ կնոջ էական դերակատարությունը հանրակրթության ու առողջապահության ասպարեզներում: Հանրակրթական դպրոցներում ու համաբուժարաններում հիմնականում աշխատում են կանայք, և այս հանգամանքը մեծապես պայմանավորված է հայուհիների ավանդական կարծրատիպով: Ըստ այդմ այսօր կանայք ակտիվ մասնակիցը չեն Հայաստանի Հանրապետության պետական կառավարմանը: Սակայն պատմաբան-ազգագրագետու միանշանակ համոզված է, որ կանանց առավել ակտիվ ներգրավումը պետական, վարչական, հասարակական կառույցներում ավելի շատ կապահովի մեր երկրի հետագա առաջընթացը:

Շայ կինը մեր հասարակության մեջ մեծապես արժևորված ու կարևորված է որպես Մայր: Այս հանգամանքով է պայմանավորված ժամանակակից հայ հասարակության՝ դարերի խորքից եկող և ավանդույթի ուժով պահպանվող վերաբերմունքը հայ մայրերի նկատմամբ:

Մայրը ցանկացած մարդու այս աշխարհում իր աչքով տեսած, իրեն գուրգուրած Սուրբ է, ով, երկրային լինելով հանդերձ, իր զավակների և թոռների **Տիեզերական Սուրբ Բարեխոսն է երկնայինին:**

Ռաֆիկ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ  
Ազգագրագետ, պ.գ.դ., պրոֆեսոր